— Ինչպէ՞ս եղաւ, որ դու եկար այստեղ եւ հանդիպեցար նրան:

Մարօն ասաց, ինքը անհամբերութեամբ սպասում էր, թէ ինչ լուր կը բերեմ ես Հասօից եւ այս ճանապարհով եկաւ իմ առաջ լսելու եղբօր խօսքը: Գիւլին նստած էր աղբիւրի մօտ հանգստանալու համար, հէնց որ տեսաւ իրան, դանակը հանեց եւ յարձակոեցաւ:

— Բայց ինչո՞ւ է նա քեզ հետ թշնամացել, — հարցրի ես:

— Դա հին բան է, — պատասխանեց Մարօն, — մի տարի Գիւլիի հօր ցեղը եկաւ մեր գիւղում ձմեռելու, Գիւլին մեր տան մօտն էր կենում: Ամէն օր մենք տեսնում էինք, որ մեր հաւերից մէկը պակասում էր, ո՞վ էր տանում, չէինք իմանում: Հայրս ասաց, կարելի է աղոէսն է գողանում: Ես մի օր նստեցի մարագի դռանը, հսկում էի, որ աղոէսը գայ եւ նրան բռնեմ, հաւերի վրէժն առնեմ: Տեսնում եմ Գիւլին դեւի պէս յայտնոեցաւ: Նա կուզէկուզ մօտեցաւ, մարագի դուռը բաց արաւ: Ես թաքնոած էի, նա ինձ չտեսաւ: Ձայն չհանեցի, մինչեւ մտաւ մարագը: Հաւերից երկուսը բռնեց, հէնց որ դուրս էր գալիս, բռնեցի ծամերիցը, գցեցի գետին, խեղդում էի, բայց այդ միջոցին Մըհեն վրայ հասաւ, չթողեց: Հիմա այն օրից ինձ հետ թշնամութիւն ունի:

— Դու այսօր էլ նրան կը խեղդէիր, եթէ ես վրայ չհասնէի: Բայց Գիւլիի պատմութիւնը մի անգամ էլ քեզանից լսած եմ:

— Բայց դու ոչ ոքին չասես այսօրոայ անցքը, Ֆարհատ:

— Իսկ քո ձեռքի վէրքը՞:

— Ես կ'ասեմ ինքս վիրաւորեցի, երբ դանակով սոխ էի կոտորում:

— Լաւ:

— Դէ՛, գնանք:

ԼԱ. ՈՒԽՏԱՒՈՐՆԵՐ

Մարօի ձեռքի վէրքն այնքան թեթեւ չէր, որքան նա կամենում էր ցոյց տալ. դանակը կտրել էր բթամատի պտղուցը կէս եղունգի հետ: Բայց նա դրա վրայ ուշադրութիւն չէր դարձնում եւ ողջ օրը զբաղոած էր ուխտագնացութեան պատրաստութիւններով: Ես տեսնում էի, թէ որպէս նա մի ձեռքով հունցում էր խմորը նազուքներ եւ իւղով հացեր թխելու համար, որպէս եռանդով պատրաստում էր մեղրալի հալոաները:

Պառաւ Խաթունը նոյնպէս ոչ սակաւ զբաղմանց մէջ էր. նա ինքը վազեց խունկ եւ մոմ գնելու գիւղի մանրավաճառից իր սեփական արծաթով, որ ետ էր գցել այսպիսի հոգեշահ բաների համար: Նա աշխատում էր վերջաց-